Համարը	N 495-Ն	*Տեսակը*	Մայր
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 16.07.07./20(260) Հոդ.279	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Ֆինանսների և էկոնոմիկայի նախարար	*Ընդունման ամսաթիվը*	08.06.2007
Ստորագրող մարմինը	Ֆինանսների և էկոնոմիկայի նախարար	*Ստորագրման ամսաթիվը*	08.06.2007
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	26.07.2007	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
28 հունիսի 2007 թ.
Պետական գրանցման թիվ 11807246

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

8 հունիսի 2007 թ. N 495-Ն
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների և դրա բաղկացուցիչ մաս կազմող թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազգային պահուստի համալրման, պահպանության, օգտագործման, ծախսման, հաշվառման, ինչպես նաև դրանց տեղաբաշխման և գտնվելու վայրերը որոշելու կարգը հաստատելու մասին» N 484-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել թանկարժեք մետաղների գնահատման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Նախարար **Վ. Խաչատրյան**

Հավելված
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարի
2007 թ. հունիսի 8-ի
N 495-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստ (այսուհետ՝ պետական պահուստ) մուտքագրվող և ելքագրվող թանկարժեք մետաղների գնահատման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության (այսուհետ՝ Գանձարան) կողմից պետական պահուստներ մուտքագրվող և պետական պահուստներից ելքագրվող թանկարժեք մետաղների գնահատման ժամանակ, դրանց գնման և բացթողման գործարքներ իրականացնելիս առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով՝

ա) Թանկարժեք մետաղների գնման և բացթողման գները սահմանվում են մեկ գրամ քիմիապես մաքուր թանկարժեք մետաղների համար՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով:

բ) Թանկարժեք մետաղների գնման և բացթողման գործարքներ իրականացնելիս դրանց գնման և բացթողման գները վերահաշվարկվում են թանկարժեք մետաղների մաքրության աստիճանին (հարգին) համապատասխան:

գ) Թանկարժեք մետաղների գնման և բացթողման գները սահմանելիս հիմք է ընդունվում այդ գների ուժի մեջ մտնելու օրվան նախորդող շաբաթվա դրությամբ Լոնդոնի թանկարժեք մետաղների բորսայում մեկ տրոյական ունցիա քիմիապես մաքուր թանկարժեք մետաղի ֆիքսված կամ սփոթ (Spot) գների միջինը՝ ԱՄՆ դոլարով արտահայտված և տվյալ շաբաթվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից մեկ ԱՄՆ-ի դոլարի նկատմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության դրամի հաշվարկային փոխարժեքը:

3. Ելնելով թանկարժեք մետաղների ապրանքային տեսքից և վիճակից, դրանց գնման գները սահմանվում են հետևյալ կարգով.

ա) Թանկարժեք մետաղների պետական և միջազգային ստանդարտներին համապատասխանող հիմնական թանկարժեք մետաղի 99,5% և ավելի բարձր պարունակությամբ ձուլակտորների համար՝ մեկ գրամ քիմիապես մաքուր մետաղների գները սահմանվում են այդ մետաղների՝ Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված միջազգային շուկայի գների 92 տոկոսի չափով:

բ) Բնակչությունից թանկարժեք մետաղների գնման գները սահմանվում են հիմնական թանկարժեք մետաղի 99,5% և ավելի բարձր պարունակության դեպքում մեկ գրամ քիմիապես մաքուր թանկարժեք մետաղների համար, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով՝ սույն կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված գների 90 տոկոսի չափով, վերահաշվարկելով թանկարժեք մետաղների մաքրության աստիճանին (հարգին) համապատասխան:

գ) Թանկարժեք մետաղների ջարդոնների և թափոնների, աֆինաժի ենթակա ոչ ստանդարտ ձուլակտորների, թանկարժեք մետաղներից պատրաստված արտադրատեխնիկական

նշանակության իրերի համար՝ մեկ գրամ քիմիապես մաքուր մետաղի գնման գները սահմանել ներքոհիշյալ աղյուսակի համաձայն:

Թանկարժեք մետաղների պարունակությունը տոկոսներով	Մեկ գրամ քիմիապես մաքուր մետաղների գնման գները՝ տոկոսով արտահայտված թանկարժեք մետաղների 99,5% և ավելի բարձր պարունակությամբ ձուլակտորների միջազգային գների նկատմամբ			
	Ոսկի	Արծաթ	Պլատին	Պալադիում
0,1-0,8	15	1	15	5
0.81-1.5	25	3	25	10
1.51-7.5	35	7	35	15
7.51-20.0	45	15	45	20
20.1-50.0	60	30	60	30
50.1-80.0	65	42	65	50
80.1 և բարձր	70	70	70	65

4. Գանձարանի կողմից արտադրական, գիտական, ֆինանսական և այլ կարիքների համար թանկարժեք մետաղների և դրանց ջարդոնների բացթողման դեպքում, հաշվի առնելով դրանց ապրանքային տեսքը, որակը և պահանջարկը, թանկարժեք մետաղների բացթողման գները սահմանվում են հետևյալ կարգով.

ա) Թանկարժեք մետաղների պետական և միջազգային ստանդարտներին համապատասխանող և հիմնական թանկարժեք մետաղի 99,5% և ավելի բարձր պարունակությամբ ձուլակտորների համար մեկ գրամ քիմիապես մաքուր թանկարժեք մետաղների բացթողման գները սահմանվում են այդ մետաղների՝ Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված, միջազգային շուկայի գների 100 տոկոսի չափով:

բ) Թանկարժեք մետաղների վերամշակման և աֆինաժի ենթակա ջարդոնների, թափոնների, ոչ ստանդարտ ձուլակտորների բացթողման գները՝ դրանց պարունակության աստիճանին (հարգին) համապատասխան, սահմանվում են տվյալ պահին այդ մետաղների գործող գնման գների 110%-ի չափով:

գ) Թանկարժեք մետաղներից պատրաստված և Գանձարանում հաշվառված արտադրատեխնիկական նշանակության իրերի բացթողման գները սահմանվում են բնակչությունից համապատասխան հարգի թանկարժեք մետաղների գնման գների 110%-ի չափով:

5. Գանձարանի կողմից թանկարժեք մետաղները գնվում և բաց են թողնվում համաձայն «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Գանձարանի կանոնադրության:

Թանկարժեք մետաղների գնման և բացթողման գները սահմանվում են յուրաքանչյուր շաբաթվա կտրվածքով: Թանկարժեք մետաղների գնման և բացթողման գների հաշվարկները կատարում, այդ գները սահմանում և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության